Քարանդինայի տեղի և հիւանդանոց, որք սիրելիք են եւ հաճոյ կամաց ազնուական Ազգապետաց, այլ եթէ 'ի մէջ մեր լինի հակառակութիւն, զի՞րդ լինիցեն սոքա»։

ԳԼՈՒԽ ԾԷ.

Խնդիր բանալեաց արտաքին և ներքին դրանց, զոյգ առաջնանոյ թեթ․ զեհեմի եկեղեցւոյն և չորից սենեկաց 'ի Ս․ Յարութեան։ Քարձումն կան․ թեղաջն Հայոց յեկեղեցւոյն Բեթղեհեմի, և վերստին կախել զՑուհնոյն։

Թ֊ԷՊԷՏՆԻ Հայք տրտմեցան ընդ ձախող ելիցն իրաց, մանաւանդ ընդ խափանումն բանալւոյ արտաքին դրան, այլ սուղ ինչ մխիթարեցան 'ի վերայ կանթեղաց և այլոց իրաց՝ զորս գրեցաք՝ և նոքա եւս ոչ եղեն յարատեւ, որպէս անխմք գրել 'ի ստորեւ։ Սակայն ոչ թուլացեալ դադարեցան 'ի խնդրոյն. զի մեծաջան վաստակօք զհետ մըտեալ էին կամ վերստին ստանալ զայն բանալի, և կամ բանալ դուռ նորոյ կից նմին, որոյ տեղին նշմարի, և միայնակ սեփհականել զհիւսիսային դուռն. զի Յոյնք առ չարութեան երբեմն աղխէին զայն 'ի յետուստ. վասն որոյ 'ի ձեռն Դատաւորին ետուն գրել 'ի Դուռն, և ինքեանք եւս առ գլխաւորս ազգին, զի հնարս գտցեն ազատել զմիաբանս և զուխտաւորս 'ի թշնամանացն Յունաց։ Եհաս գիր Դատաւորին 'ի Դուռն. գրեաց եւ Պատրիարքն Կոստանդինուպօլսոյ վասն այսց խնդրոց։ Եւ զկնի աւուրց ինչ Փոխանորդն Երուսաղէմի Յովհաննէս Եպիսկոպոս գընաց ընդ նախորդին իւրոյ առ պաշտօնեայն արտաքին գործոց. եկին և 'ի Յունաց ոմանք, ընդ որս էր եւ այրն երեւելի Ստեփանաքի Պէյ. եւ եղեւ վէճ յատենի անդ վասն դրանց ժամս իբր 2, և հուսկ ուրեմն որոշեցաւ՝ եթէ հաճեսցին Յոյնք՝ տացեն Հայոց զմի բանալի արտաքին դրան. իսկ եթէ ոչ, տացեն հրաման Հայոց բանալ զայլ դուռն մերձ նմին։ Իսկ յաղագս ներքին երից դրանց՝ ոչ գտաւ 'ի Դիւանս արձանագրութիւն ինչ, ուստի համարեցան դրունքն այնոքիկ նորահնար և 'ի վերջոյ բացեալ.